27.12.2022թ.

Զեկույց

Մարզի համայնքների բյուջեների սեփական եկամուտների հավաքագրման վերաբերյալ

27.12.2022 թվականի դրությամբ մարզի համայնքների բյուջեների սեփական եկամուտների հավաքագրման կատարողականը բոլոր հարկատեսակների գծով կազմել է 97,9%: Նախատեսված 5 միլիարդ 643 միլիոն 928 հազար դրամի դիմաց հավաքագրվել է 5 միլիարդ 527 միլիոն 926 հազար դրամ, նախատեսված պլանը թերակատարվել է 116 միլիոն հազար դրամով կամ 2,1%-ով: 2021թվականի նույն ժամանակաշրջանի ցուցանիշը կազմել է 109.5%, սակայն սեփական եկամուտների տարեկան պլանը կազմել է 4 միլիարդ 658 միլիոն 347.4 հազար դրամ կամ 984 միլիոն 880.4 հազար դրամով պակաս քան 2022 թվականին, որի դիմաց հավաքագրվել է 5 միլիարդ 100 միլիոն 938.8 հազար դրամ, կամ 426 միլիոն 987.6 հազար դրամ պակաս քան 2022 թվականին, ինչից ենթադրվում է, որ 2022 թվականի պլանավորումն ավելի իրատեսական է: Պլանավորման աճը 2022 թվականին կազմել է 21,1%, իսկ փաստացի հավաքագրման աճը 2021 թվականի համեմատ կազմել է 426 միլիոն 987,6 հազար դրամ, կամ 8,4%:

Այժմ սեփական եկամուտների հավաքագրումը 2022թվականի ընթացքում՝ ըստ առանձին հարկատեսակների:

1. Գույքահարկ /փոխադրամիջոցներից/ – Մարզում կատարողականը կազմել է 103,7%: Նախատեսված 1 միլիարդ 651միլիոն 399.5 հազար դրամի դիմաց հավաքագրվել է մեկ միլիարդ 721 միլիոն 933,7 հազար դրամ, կամ ավել է հավաքագրվել 61 միլիոն 534.2 հազար դրամ:

Այս հարկատեսակի գծով ցածր ցուցանիշ է արձանագրվել Նոր Հաճն՝ 87,1% և Գառնի (81.4%), համայնքներում:

2. Անշարժ գույքի հարկ – Կատարողականը կազմել է 100,5%: Նախատեսված մեկ միլիարդ 317 միլիոն 728,1 հազար դրամի դիմաց հավաքագրվել է մեկ միլիարդ 323 միլիոն 767,2 հազար դրամ, կամ ավել է հավաքագրվել մոտավորապես 6 միլիոն դրամ 39 հազար դրամ:

Անշարժ գույքի հարկի գծով առավել պակաս հավաքագրումներ են արձանագրվել Հրազդան՝ 71.3%, Նոր Հաճն՝ 84,6% և Ջրվեժ՝ 81,6% համայնքներում:

3. **Տեղական տուրքերի գծով** կատարողականը կազմել է 119,5 %: Նախատեսված 258 միլիոն 318,4 հազար դրամի դիմաց հավաքագրվել է 308 միլիոն 793,3 հազար դրամ, կամ ավել է հավաքագրվել 50 միլիոն 474,9 հազար դրամ: Տեղական տուրքերի գծով բոլոր համայնքներում նախատեսված պլանը գերակատարվել է:

4. **Պետական տուրքեր**- Կատարողականը կազմել է 109,9%: Նախատեսված 88 միլիոն 400 հազար դրամի դիմաց հավաքագրվել է 97 միլիոն 134,4 հազար դրամ, կամ գերակատարվել է 8 միլիոն 734,4 հազար դրամով::

5. **Հողի և գույքի վարձավճարների գծով** կատարողականը կազմել է 102,0 %: Նախատեսված 262 միլիոն 453,6 հազար դրամի դիմաց հավաքագրվել է 267 միլիոն 660,4 հազար դրամ: Ավել է հավաքագրվել 5 միլիոն 206.9 հազար դրամ:

Ջրվեժ համայնքում արձանագրվել է 45,8% կատարողական, որն ամենացածրն է:

6. **Աղբահանության վճարների գծով**- Առաջադրանքը կատարվել է 86,9%-ով: Նախատեսված 606 միլիոն 706,4 հազար դրամի դիմաց հավաքագրվել է 527 միլիոն 17.3 հազար դրամ, կամ 79 միլիոն 689 հազար դրամով պակաս գումար::

Առավել բարձր ցուցանիշներ են արձանագրվել Հրազդան, Ծաղկաձոր, Նաիրի, Ակունք և Արզնի համայնքներում, մնացած համայնքներում աղբահանության վճարների գծով արձանագրվել են ցածր ցուցանիշներ:

Ֆինանսական և սոցիալ տնտեսական
զարգացման վարչության պետի պաշտոնակատար՝ **Մ.Պետրոսյան**